

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՁԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ



«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպահրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0001, Թումանյան 17,
հեռ. (+374 10) 510 510, ֆաքս (+374 10) 510 573
էլ.փոստ՝ info@inecobank.am,
ինտերնետային կայք՝ www.inecobank.am

«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպահրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0001, Թումանյան 17,
հեռ. (+374 10) 510 510, ֆաքս (+374 10) 510 573
էլ.փոստ՝ info@inecobank.am,
ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Արժեթղթերի տեսակը	անվանական, արժեկտրոնային պարտատոմս	
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային	
Արժեթղթերի քանակը	Թողարկման ծավալին և անվանական արժեքին համապատասխան	
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը	Առավելագույնը 3,500,000,000 (երեք միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ	Առավելագույնը 20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	
Շրջանառության ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՁԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ»:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


ԲԱԺԻՆ 1. ԱՍՓՈՓԱԹԵՐԹ.....	5
1.1 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	5
1.2 ԲԱՆԿԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐ.....	13
1.3. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	15
1.4. ԲԱՆԿԻ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ.....	15
1.5 ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	16
1.6 ԲԱՆԿԻ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	17
1.7 ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	18
1.8. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ.....	20
1.9 ԲԱՆԿԻ ԱՍՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	20
<u>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</u>	<u>24</u>

Սույն ազդագրի համար պատասխանատու անձինք


Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն, ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք


«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ
Ավետիս Բալոյան


20.02.2020
(ամսաթիվ)


«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Կարեն Սաֆարյան


20.02.2020
(ամսաթիվ)


«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Աշոտ Ավետիսյան


20.02.2020
(ամսաթիվ)


«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Սուլիսան Գվալիա


20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն,
տնօրինության նախագահ
Արեն Նալթալյան


20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան


20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Զիչյան


20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան



20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Մանրածախ բիզնեսի տնօրեն,
տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան



20.02.2020
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ
Արշալույս Սահակյան



20.02.2020
(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես սույն ծրագրային ազդագրի լրացման ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ծրագրային ազդագրի և դրա լրացումների վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ծրագրային ազդագրի և լրացումների մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Ինտերբանկի գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջինիս ինտերնետային կայքում՝ www.inecobank.am:

1.1 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի ֆիրմային լրիվ անվանումը՝

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ЗАКРЫТОГО ТИПА «ИНЕКОБАНК»
անգլերեն՝ “INECOBANK” CLOSED JOINT STOCK COMPANY

Բանկի ֆիրմային կրճապ անվանումը

հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ АОЗТ “ИНЕКОБАНК”
անգլերեն՝ “INECOBANK” CJSC

Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 68

Բանկի գրանցման վկայական թիվ 0169, գրանցման ամսաթիվ 07.02.1996թ.

Բանկի պետական գրանցման վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17

Կապի միջոցները՝ հեռ. (+37410) 56-59-74, (+37410) 51-05-10, ֆաքս (+37410) 51-05-73

Էլ. Փոստ՝ info@inecobank.am

Ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել Դիլինգային գործառնությունների բաժնի որևէ մասնագետի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 56-59-74:

❖ **Բանկի նկարագիրը**

1. Բանկի հիմնադրումը

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բանկ) հիմնադրվել է 1996թ. փետրվարի 7-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N0169, իսկ բանկային գործունեության լիցենզիան՝ N 68: Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 24 մասնաճյուղ, չունի ներկայացուցչություն:

Բանկն ավելի քան 20 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային համակարգում՝ մատուցելով ունիվերսալ բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին՝ սպասարկելով ավելի քան 400,000 հաճախորդների Հայաստանում: Բանկը առանձնանում է հայաստանյան բանկային շուկայում իր ուրույն կորպորատիվ ոճով: Դրա ձևավորման գործում կարևոր դեր է խաղում «Ինտելոբանկ» ապրանքանիշի զարգացումը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել զգայական և գիտակցական կապ Բանկի ներկա ու հնարավոր հաճախորդների և Բանկի միջև:

Տարիներ շարունակ լինելով ամենաեկամտաբեր և ամենաարագ զարգացող բանկերից մեկը՝ Բանկը մատուցում է կորպորատիվ ու մանրածախ բանկային ծառայություններ: Բանկը որդեգրել է հաճախորդակենտրոն մոտեցում՝ իր ծառայություններն առավելագույնս համապատասխանեցնելով հաճախորդների պահանջմունքներին:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխիքների, ակրեդիտիվների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա, հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի անդամ, ինչպես օրինակ «MoneyGram», «Unistream», «IntelExpress» և «Converse Payments» համակարգերը, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ինչպես նաև ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլիացված անդամ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ի անդամ, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ:

2. Բանկի առաքելությունը

Բանկի առաքելությունն է մարդկանց նպատակների իրագործման համար հնարավորություններ ստեղծելը՝ մատուցելով իրենց պահանջներին համահունչ ֆինանսական ծառայություններ:

3. Բանկի տեսլական

Բանկի տեսլականն է հաջորդ 10 տարիների ընթացքում դառնալ տարածաշրջանային առաջատար ֆինանսական կազմակերպություն՝ ունենալով 1 մլրդ դոլարին համարժեք կապիտալիզացիա:

4. Բանկի արժեքներն են՝

Բանկի արժեքները արտացոլում են Բանկի ավելի քան 20-ամյա պատմությունը և հանդիսանում են հաղթանակների գրավականը: Նրանք ոչ միայն կարևոր են Բանկի տեսլականին և նպատակներին հասնելու համար, այլև ուղղորդում են Ինտեկոթիմի յուրաքանչյուր անդամի՝ գործընկերների, հաճախորդների և համայնքի ներկայացուցիչների հետ շփման և համագործակցության ընթացքում: Բանկի արժեքները հանդիսանում են Բանկի գործունեության կարևորագույն հիմքը և նպաստում են նորարարական գաղափարների և ծրագրերի մշակմանը: Դրանք են՝

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ազնվությունը Բանկի համար հիմնաքարային արժեք է և սահմանված վարվելակերպ Բանկի բոլոր շահառուների նկատմամբ: Բանկի համար ազնվությունը նախ և առաջ մտածելակերպի և գործելաոճի, նպատակների և այդ նպատակներին հասնելու միջոցների ներդաշնակությունն է՝ հիմնված թե՛ իրավական, թե՛ բարոյական նորմերի վրա:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Բանկն ունի նախաձեռնողականության ու վճռական գործողությունների ազատություն՝ ի շահ Բանկի հաճախորդների և ի նպաստ ընկերության: Այդ ազատությունն է օգնում Ինտեկոթանկին զարգանալ՝ խրախուսելով նորարարությունն ու առաջնորդությունը:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Թափանցիկությունն այն կարևորագույն արժեքներից է, որի վրա հիմնվում է Բանկի գործելաոճը: Այն Բանկի համար խորհրդանիշ է՝ անկախ նրանից՝ Բանկը գտնվում է թռիչքային զարգացման, թե լրջագույն մարտահրավերների փուլում:

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լավ արդյունքի հասնելու ու հաջողելու միակ ճանապարհը միմյանց հետ համագործակցող թիմերի առկայությունն է, որի բոլոր անդամները պատրաստ են կրելու հաջողության դափնիներն ու ձախողման պատասխանատվությունը: Բանկում

բոլորը վստահում են իրար ու հարգում միմյանց կարծիքը, ինչպես նաև աջակցում բոլոր նրանց, ովքեր պատրաստ են այս միջոցով գործելու ու արդյունքի հասնելու:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻՉՄ

Պրոֆեսիոնալիզմ ասելով Բանկը ամբողջացնում է հնեկրթանկի համար ամենաբազմաթիվ արժեքների շրջանակը: Բանկը համատեղում է գործողությունների ազատությունն ու ստեղծագործ միտքը ազնիվ ու թափանցիկ գործելաոճի հետ՝ կառուցելով մասնագիտական ու անհատական լավագույն հատկանիշներով օժտված թիմ:

5. Բանկի ապրանքային նշանը

Բանկի ապրանքային նշանը՝ գրանցված ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 04.05.2004թ.-ին, հետևյալն է՝



6. Բանկի կարգախոսն է՝ «Արժևորե՛ք Ձեր ժամանակը»:

7. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ 20.02.2020թ. դրությամբ, որը բաժանված է 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 80,000 (ութսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հիմնական բաժնետերերն են՝

(համաձայն հնեկրթանկ ՓԲԸ Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի առ 20.02.2020թ.):

N	Անուն, Ազգանուն	Սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի քանակը /հատ/	Մասնաբաժինը /%/
1	Բալոյան Ավետիս Յուլիկի	69,273	38.10%,
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	59,911	32.95%
3	ԱԳՐԻՖ ԿՈՈՊԵՐԱՏԻՖ Յու Էյ	18,201	10.01%
4	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿՆԿ ՄՆՀ/DWM FUNDS S.C.A.- SICAV SIF	9,272	5.10%

8. Բիզնեսի համառոտ նկարագիր.

Բանկն իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները.

Վարկային ծառայություններ, որոնց մեջ կարելի է առանձնացնել՝

🔍 Մանրաձախ բիզնես

Բանկի հիմնական մրցակցային առավելությունն է մանրաձախ վարկավորումը, որը տարիների ընթացքում կատարելագործվել է՝ քայլ առ քայլ կիրառելով նորագույն տեխնոլոգիական լուծումներ: Ընդհանուր առմամբ այս ուղղությունը բաղկացած է ապառիկ վարկավորումից, սպառողական և հիփոթեքային վարկերից:

1. Ապառիկ վարկեր. Բանկն առաջինն էր շուկայում, որը հետևողականորեն զարգացրեց ապառիկ վաճառքի տեխնիկան՝ ներկայացնելով «Ապառիկը տեղում» ծառայությունը, որը էականորեն հեշտացրեց ապառիկ գնումների ընթացքը, որի արդյունքում նախկինում մի քանի օր տևող գործընթացը այժմ հնարավոր է իրականացնել մի քանի րոպեում: Այսօր Բանկն ապառիկի շուկայում առաջատար է և կշարունակի լինել առաջատար: Սա այն ոլորտն է, որտեղ Բանկը տրամադրում է լավագույն ծառայություններն իր հաճախորդներին:

2. Սպառողական վարկեր. Բանկն իր հաճախորդներին տրամադրում է տարբեր նպատակներով սպառողական վարկեր՝ գրավով և առանց գրավի: Ուշագրավ են Բանկի վերջին մի քանի տարիների ձեռքբերումները. 2017 թվականի սկզբում ներդրվեցին արագ սպառողական վարկերը, իսկ արդեն տարեվերջին՝ «1 CLICK» առցանց վարկը: Բանկն առաջինն էր հայկական շուկայում, որ կիրառեց ամբողջովին ավտոմատացված առցանց վարկավորման գործընթաց:

«1 CLICK» վարկը հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով աշխարհի ցանկացած կետից՝ InecoMobile և InecoOnline համակարգերի միջոցով՝ առանց Բանկի մասնաճյուղեր այցելելու:

2018թ. ընթացքում Բանկը մեծացրել է սպառողական վարկերի սահմանաչափը: Այժմ Բանկի հաճախորդները կարող են ստանալ մինչև 5,000,000 ՀՀ դրամ «1 CLICK» օնլայն վարկ՝ առանց երաշխավորի և հավելյալ թղթաբանության:

3. Հիփոթեքային վարկեր. Բանկն առաջարկում է հիփոթեքային վարկեր՝ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, կառուցապատման, ինչպես նաև այլ բանկում հաճախորդի ունեցած հիփոթեքային վարկի վերաֆինանսավորման նպատակով:

Վարկավորումը իրականացվում է ինչպես Բանկի ներքին ռեսուրսներով, այնպես էլ մի շարք կառույցների՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան Երկիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրերի շրջանակներում: Բանկն իր ռեսուրսներով տրամադրում է նաև լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկեր, որի շրջանակում առաջին երեք տարիների համար գործում է հաստատուն տոկոսադրույք, այնուհետև՝ լողացող:

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում տրամադրվում են «Բնակարանային Էներգաարդյունավետ վարկեր», որոնք ուղղված են բնակարանների և/կամ բնակելի տան

էնտերգաարդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև «Մարզային բնակարանային վարկեր»՝ ՀՀ մարզերում բնակարանների և/կամ բնակելի տների ձեռքբերումը խթանելու նպատակով:

Բանկի սքորինգային համակարգը վերջին տարիների ընթացքում էականորեն կատարելագործվել է և հնարավորություն է ընձեռում իրականացնել վարկունակության գնահատում տարբեր տիպի հաճախորդների համար, հետևաբար նաև տրամադրել կոնկրետ հաճախորդի վարկունակությանը և կարիքներին համապատասխանող վարկային պրոդուկտ:

🔗 Կորպորատիվ բիզնես

1. Բիզնես վարկեր. Բանկը բիզնես ֆինանսավորման ոլորտում մատուցում է բավականին ընդարձակ ծառայություններ, ինչպես իր ներքին ռեսուրսների հաշվին, այնպես էլ համագործակցող կազմակերպությունների կողմից ներգրավված միջոցների հաշվին: Վերջին տարիների ընթացքում Բանկը համագործակցել է մոտ 30 միջազգային ֆինանսական և ներդրումային կազմակերպությունների հետ, որոնց շարքին են դասվում KFW, ADB, IFC, EBRD, DEG, FMO, OFID, DWM, EFSE, Incofin Investment Management, Blue Orchard Microfinance Fund և այլն:

Բանկի ռազմավարության կարևոր մաս է կազմում Փոքր ու Միջին Ձեռնարկությունների ֆինանսավորումը: Իր ՓՄՁ հաճախորդներին Բանկն առաջարկում է վարկավորման լայն գործիքակազմ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, գյուղատնտեսական վարկեր և այլն:

Այսօր, իր ճկուն գործելաոճի շնորհիվ Բանկը կորպորատիվ հաճախորդների շրջանակում վայելում է բարի համբավ:

2. Առևտրի ֆինանսավորման գործիքներ. Բանկն առևտրի ֆինանսավորման ոլորտում տրամադրում է ծառայությունների մատուցման արդյունավետ և ամբողջական գործիքակազմ (երաշխիքներ, ակրեդիտիվներ, ինկասոներ և այլն), և ակտիվ համագործակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), ինչպես նաև միջազգային առաջնակարգ մի շարք բանկերի հետ: Բանկն արժանացել է միջազգային մի շարք հեղինակավոր մրցանակների: 2007թ. և 2009 թ. Բանկը Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի (EBRD) կողմից ճանաչվել է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում ամենաակտիվ թողարկող բանկ, 2010թ. Գերմանական «Կոմերցբանկի» կողմից ստացել է մրցանակ առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանց համագործակցության համար, իսկ 2016թ. Բանկը ճանաչվել է «Լավագույն գործընկեր բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից:

Ավանդային գործառնություններ

Բանկն իր ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ժամկետային և ցպահանջ ավանդների ներդրման լայն հնարավորություններ, ինչպես նաև

խնայողական հաշվի և նպատակային խնայողական պլանի ընտրման ճկուն տարբերակներ: Ավանդի տեսակները առավելագույնս հարմարեցված են հաճախորդների պահանջներին և նպատակներին: Իրավաբանական անձ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար Բանկը նույնպես նախատեսել է ավանդների ներդրման գրավիչ տարբերակներ՝ ավանդի ժամկետից և արժույթից կախված ճկուն սակագներով: Ավանդատեսակների նպատակների և պայմանների միջև ճիշտ հավասարակշռության պահպանման շնորհիվ վերջին տարիների ընթացքում Բանկը շարունակաբար գրանցում է ավանդատու հաճախորդների ցանկի ընդլայնում և ավանդային պայմանագրերի վերականգնման բարձր ցուցանիշ:

Գործառնություններ արժեթղթերով

❖ Բրոքերային ծառայություններ

Բանկն իր հաճախորդներին տրամադրում է Բրոքերային ծառայություններ, հնարավորություն ընձեռնելով գնել և վաճառել տարբեր տեսակի արժեթղթեր հայկական շուկայում:

❖ Պահառուական ծառայություններ

Բանկի կողմից մատուցվող արժեթղթերի պահառության ծառայությունը նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնք սեփականության իրավունքով կամ որպես անվանատեր տիրապետում են այլ անձանց կողմից թողարկված արժեթղթերի:

❖ ՀԿԴ ծառայությունների միջնորդավորում

Բանկը, հանդիսանալով Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր, միջնորդավորում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները, որոնք ներառում են ռեեստրի վարման, արժեթղթերի պահառության հետ կապված ծառայությունները:

❖ Այլ հաշվարկադրամարկղային ծառայություններ, որոնք ստանդարտ, ավանդական բանկային ծառայություններ են և իրենց մեջ ներառում են՝

1. Դրամական փոխանցումներ
2. Միջազգային փոխանցումներ
3. Արտարժույթային փոխարկումներ և այլն

Առանձնահատուկ շեշտադրման կարիք ունեն թվային ուղիներով մատուցվող ծառայությունները, որը Բանկը իրագործում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ համակարգերի, ինչպես նաև 2018թ. ներդրված Ինեկոփեյ ծառայության միջոցով:

❖ InecoOnline

ԻնեկոՕնլայն համակարգը հուսալի և ապահով թվային բանկինգի լուծում է, որը Բանկի հաճախորդներին հնարավորություն է ընձեռում օգտվել բանկային գրեթե բոլոր ծառայություններից ինտերնետ հասանելիությամբ համակարգչի միջոցով՝ առանց բանկ այցելելու:

❖ InecoMobile

ԻնեկոՄոբայլ բջջային հավելվածը ժամանակակից մոբայլ բանկինգի լավագույն տարբերակն է, որը հնարավորություն է ընձեռում, ունենալով միայն սմարթֆոն և ինտերնետ հասանելիություն, կատարել բանկային գործարքներ ցանկացած վայրում, ցանկացած պահի՝ 24/7 ռեժիմով:

❖ INECOPAY

Հայաստանյան բանկային համակարգում բացառիկ վճարային լուծում է, որը հնարավորություն է ընձեռում անկոնտակտ վճարումներ կատարել անմիջապես սմարթֆոնով: Այն առանձնանում է շուկայում իր հարմարավետությամբ և ապահովությամբ:

2017-2018 թթ. ընթացքում Բանկը կապիտալի շահութաբերությամբ գտնվել է ՀՀ բանկային համակարգի առաջին եռյակում, իսկ շահույթի մեծությամբ՝ առաջին հնգյակում:

2018թ. տարեվերջի դրությամբ՝

- ❖ Բանկը ընդամենը ակտիվներով գրավել է ՀՀ բանկային համակարգում 5-րդ հորիզոնականը
- ❖ Վարկային պորտֆելի մեծությամբ զբաղեցրել է բանկային համակարգի 4-րդ հորիզոնականը
- ❖ Բանկը նշանակալի աճ է արձանագրել նաև ավանդային պորտֆելով՝ համակարգում զբաղեցնելով 7-րդ հորիզոնականը
- ❖ Բանկը առաջատարներից է շահույթի ծավալով ու կապիտալի շահութաբերությամբ, ինչպես նաև արդյունավետության մի շարք այլ ցուցանիշներով:

❖ Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

❖ Բանկի եկամտաբեր ակտիվները

	31.12.2019 (Չստուգված)	31.12.2018	31.12.2017
Ակտիվներ, այդ թվում.	339,109,558	292,740,724	277,842,150
Եկամտաբեր ակտիվներ	272,325,926	239,195,492	219,399,961
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	238,649,450	206,416,531	173,066,076
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	1,073,545	1,061,361	2,884,563
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,132,214	2,718,140	12,142,142
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,238,889	28,999,460	31,307,180
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	80.3%	81.7%	79.0%

❖ Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 24 մասնաճյուղ (20.02.2020թ. դրությամբ)

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ք. Երևան, Թումանյան փ. 17
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ	
Աբովյան 18 մասնաճյուղ	ք. Երևան, Աբովյան փ. 18,
Կորյուն մասնաճյուղ	ք. Երևան, Տերյան 105/1
Մաշտոց մասնաճյուղ	ք. Երևան, Մաշտոց պ. 18, շ. 52/1
Արաբկիր մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ., 38/2 շենք -62
Կոմիտաս մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ. 39 շ. թ. 78
Կոմիտաս 2 մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի 54բ., 1 շինություն
Նոր Նորք մասնաճյուղ	ք. Երևան, Նոր Նորք, Գայի պող. 15/9, շ. 17/1
Աջափնյակ մասնաճյուղ	ք. Երևան, Բաշինջաղյան փողոց, հ. 192/8,
Մալաթիա մասնաճյուղ	ք. Երևան, Ռաֆֆու փ. 39 շենք, 64 տարածք
Շենգավիթ մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց 22/3փ, շինություն 105
Շենգավիթ 2 մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց փողոց 15 շ., շին թիվ 120
Տիգրան Մեծ մասնաճյուղ	ք. Երևան, Տիգրան Մեծ պող. 29ա-95
Ջեյթուն մասնաճյուղ	ք. Երևան, Քանաքեռ-Ջեյթուն, Պարույր Սևակ փ. 51/9
Ավետիսյան մասնաճյուղ	ք. Երևան, Ավետիսյան 63/41
Խորենացի մասնաճյուղ	ք. Երևան, Խորենացի փ. 15, "Էլիտ Պլազա" Բիզնես Կենտրոն, առաջին հարկ
Կասկադ մասնաճյուղ	ք. Երևան, Բաղրամյան 2/83
Գյումրիի մասնաճյուղ	ք. Գյումրի, Ալեք Մանուկյան փ. 6
Վանաձորի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 75
Լոռի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 41ա
Արմավիրի մասնաճյուղ	ք. Արմավիր, Հանրապետության փ. 17
Հրազդան մասնաճյուղ	ք. Հրազդան, Օգոստոսի 23 - 46/100
Աբովյան մասնաճյուղ	ք. Աբովյան, Սահմանադրության հրապարակ 7/3
Աշտարակ մասնաճյուղ	ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապ. 2, բնակ. տան 1-ի հարակից տարածք
Արտաշատ մասնաճյուղ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23փ, թիվ 93

Բանկը չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

1.2 ԲԱՆԿԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐ

Բանկն, ինչպես ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները պետք է տեղյակ լինեն իրենց կողմից կատարված ներդրումների հետ կապված ռիսկերին նախքան Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր ձեռք բերելը:

Պարտատոմսերում ներդրում կատարողները առնչվում են ինչպես տվյալ պարտատոմսերը թողարկող կազմակերպության՝ Բանկի գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի (շուկայական ռիսկ) հետ:

Բանկի ռիսկը կապված է վարկային, գործառնական, իրացվելիության և շուկայական ռիսկերի հետ: Տվյալ ռիսկերը կարող են հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Մասնավորապես, Բանկի համար առավել էական ռիսկերն են.

1. Գործընկերների կամ վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով:
2. Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:
3. Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում: Նման փոփոխությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել Բանկի տոկոսային մարժան:
4. Ընդհանուր տնտեսության ռիսկեր. ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության, մասնավորապես վարկավորման ծավալների վրա:
5. Օրենսդրական ռիսկ. Օրենսդրական դաշտի փոփոխությունները ևս կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա:
6. Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որը առաջանում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացների, մարդկանց և համակարգերի, կամ արտաքին գործոնների պատճառով:

❖ Պարտատոմսերին առնչվող ռիսկերից կարելի է առանձնացնել՝

1. Տոկոսադրույքի ռիսկ. Այս ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գրավչության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, ինչի արդյունքում էլ ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:
Նշված ռիսկը, սակայն, էական է այն դեպքում, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարվելը:
2. Արդարժույթի ռիսկ. Այս ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով և կարող է բացասական ազդեցություն ունենալ

ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա:՝ Կախված այն բանից, թե ինչ նպատակով է կատարվում ներդրումը, հետագայում դրանք ՀՀ դրամի կամ ԱՄՆ դոլարի փոխարկելիս հնարավոր են կորուստներ:

3. Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ. Պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու հետ կապված հնարավոր են խնդիրներ՝ կախված շուկայում առկա իրավիճակից: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում, սակայն իրացվելիության ռիսկը այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

1.3. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

1.4. ԲԱՆԿԻ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ

Բանկի 2018թ. անկախ աուդիտարական ստուգումն իրականացվել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ կողմից: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն Դելոյթ ԱՊՀ Հոլդինգս Լիմիթեդի («Դելոյթ ԱՊՀ») մասն է կազմում, որը Deloitte Touche Tohmatsu Limited-ի անդամ ընկերությունն է ԱՊՀ-ում:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Ամիրյան փող., 4/7 շենք, 7-րդ հարկ, հեռ. +374-10-526520, ֆաքս՝ +374-10-527520, ինտերնետային կայքի հասցեն է՝ <http://www.deloitte.am>:

Բանկի 2016, 2017 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Քեյ-Փի-ԷՄ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:

«Քեյ-Փի-ԷՄ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է շվեյցարական KPMG International Cooperative («KPMG International») կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-ԷՄ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Քեյ-Փի-ԷՄ-Ջի Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 56-67-62, ֆաքս՝ +37410 56-67-62, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.kpmg.am:


Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Աուդիտորական եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5 ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝



❖ Բաժնետերերի ընդհանուր ժողով

Ծրագրային ազդագրի լրացումը կազմելու պահին՝ 20.02.2020թ., Բանկի հիմնական բաժնետերերն են՝ (20.02.2020թ.):

1	Բալոյան Ավետիս Յուլիսի	Հանդիսանում է Բանկի 69,273 (վաթսուինը հազար երկու հարյուր յոթանասուներեք) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (38.10%)
2	Սաֆարյան Կարեն Գառնիկի	Հանդիսանում է Բանկի 59,911 (հիսունինը հազար ինը հարյուր տասնմեկ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (32.95%)
3	ԱԳՐԻՖ ԿՈՌՊԵՐԱՏԻՖ ՅՈՒԷյ	Հանդիսանում է Բանկի 18,201 (տասնութ հազար երկու հարյուր մեկ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (10.01%)
4	ԴԻԴԱԲԼՅՈՒԷՄ ՖԱՆԴՍ ԿԲԸ ՓԿԼԿ ՄՆՀ /DWM FUNDS S.C.A.-SICAV SIF	Հանդիսանում է Բանկի 9,272 (ինը հազար երկու հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (5.10%)

❖ Բանկի խորհուրդը

Ծրագրային ազդագրի լրացումը կազմելու պահին՝ 20.02.2020թ. դրությամբ, Բանկի խորհուրդը բաղկացած է վեց անդամից՝

1	Ավետիս Բալոյան	խորհրդի նախագահ
2	Կարեն Սաֆարյան	խորհրդի անդամ
3	Աշոտ Ավետիսյան	խորհրդի անդամ
4	Սուլխան Գվալիա	խորհրդի անդամ
5	Յան Դիվայնգարթ	խորհրդի անդամ
6	Կարինե Սարուխանյան	խորհրդի անդամ

❖ **Բանկի Գործադիր մարմինը**

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի գործադիր տնօրենը և Բանկի տնօրինությունը:

Բանկի Տնօրինությունը 20.02.2020թ. դրությամբ կազմված է 6 անդամից՝

1	Արեն Նալթալյան	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
2	Վաղինակ Խաչատրյան	Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
3	Արտեմ Զիչյան	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
4	Հայկ Ոսկանյան	Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
5	Լևոն Ռուբինյան	Մանրածախ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
6	Արշալույս Սահակյան	Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ

❖ **Բանկի աշխատակիցների թիվը ներկայացված է ստորև՝**

	2019թ.	2018թ.	2017թ.
Աշխատակիցների թիվը	838	811	828

Ծրագրային ազդագրի լրացումը կազմելու պահին՝ 20.02.2020թ. դրությամբ, Բանկի աշխատակիցների թիվը կազմում է 837:

1.6 ԲԱՆԿԻ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը մինչ այժմ թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր: 2009թ. Բանկը թողարկել է 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով գեղջատոկոսային պարտատոմսեր:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Համաձայն Բանկի կանոնադրության՝ կանոնադրական կապիտալը կազմված է թվով 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 80,000 (ութսուն) հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում:

Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 14.04.2018թ. և 04.07.2019թ. գրանցված Ծրագրային ազդագրերի շրջանակներում Բանկը թողարկել է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ հիմնական պայմաններով.